ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՇՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/5-1

ք. Գյումրի «25 » ապրիլի 2019թ.

«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամն ի դեմս Ե.Սերոբյան, որը գործում է «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ Մարգարիտ Արծրունյանն, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու. պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Պայմանագրի գինը կազմում է **1033020 (մեկ միլիոն երեսուներեք հազար քսան)** ՀՀ դրամ, ներառյալ բոլոր հարկերը: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պարանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված՝ ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով. Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ	Ա/Ձ Մարգարիտ Արծրունյան
ք.Գյումրի Պ. Սևակի 4	ք. Գյումրի Կրուպսկայայի փ 93
Անելիք Բանկ ՓԲԸ Գյումրու մ/6	Կոնվերս՝բանկ ՓԲԸ
Հ/Հ 11802024816700	Հ/Հ 1930045842260100
ՀՎՀՀ՝ 05502348	ՀՎՀՀ՝ 87321645
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«25 » ապրիլի 2019թ. կնքված
ՇՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/5-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ծագման երկիրը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
1	30197622	Թուղթ A4	Ռուսաստան	Թուղթ A4 ֆորմատի A դասի	կգ	636,6667	955000	1500	ք.Գյումրի՝Պ. Սևակի 4	Համաձայն պատվերի:	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարա • րել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգ ամՊատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում: Ապրանքների տեղափոխումը, իրականացնում է մատակարարը

5	30192130	Մատիտ	Չինաստան	Մատիտ 2.5 HB, սրած, ռետինե ջնջոցով:	Հատ	40	9600	240	ք.Գյումրի Պ. Սևակի 4	Համաձայն պատվերի:	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում: Ապրանքների տեղափոխումը, իրականացնում է մատակարարը
6	30192231	Թղթից սկոչ	Հայաստան	Թղթից սկոչ	Հատ	100	1000	10	ք.Գյումրի Պ. Սևակի 4	Համաձայն պատվերի:	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում: Ապրանքների տեղափոխումը, իրականացնում է մատակարարը

7	30192700	Սեղանի գրասենյակայ ին պիտույքների հավաքածու	Ռուսա ստան	Սեղանի կոմպլեկտ , մոխրագույն, 11 առարկա՝ 2 գրիչ, 2 մատիտ, ռետին, մկրատ, քանոն 15սմ, սրիչ, կարիչ, կարիչի ասեղ, հակակարիչ, նշումների համար 100 էջ, գրասենյակային դանակ:	Հատ	2500	12500	5	ք.Գյում րի Պ. Սևակի 4	Համաձայն պատվերի:	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարա րել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգ ամՊատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում: Ապրանքների տեղափոխումը, իրականացնում է մատակարարը
9	30197120	Կոճգամ	Չինա ստան	Գունավոր մեխիկ, պլաստմասե գլխիկով,տարբեր գույների:Տուփի մեջ:	Տուփ	120	6000	50	ք.Գյում րի Պ. Սևակի 4	Համաձայն պատվերի:	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարա րել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգ •ամՊատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում: Ապրանքների տեղափոխումը, իրականացնում է մատակարարը
10	30197220	Ամրակ սովորական (սկրեպ)	Չինա ստան	Գրասենյակային ամրակներ (Սկրեպ), մետաղական, վինիլային ծածկույթով, 30 մմ	Տուփ	80	2400	30	ք.Գյում րի Պ. Սևակի 4	Համաձայն պատվերի:	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարա

											ռել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգ ամՊատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում: Ապրանքների տեղափոխումը, իրականացնում է մատակարարը
11	30197220	Ամրակ սև	Չինաստան	Գրասենյակային ամրակներ (Սկրեպ),, պլաստմասե: Տուփի մեջ 100 հատ: Գույնը սև փոքր:	Տուփ	80	2400	30	ք.Գյումրի Պ. Սևակի 4	Համաձայն պատվերի:	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգ ամՊատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում: Ապրանքների տեղափոխումը, իրականացնում է մատակարարը
12	30197220	Ամրակ սև	Չինաստան	Գրասենյակային ամրակներ (Սկրեպ), պլաստմասե: Տուփի մեջ 100 հատ: Գույնը սև, միջին:	Տուփ	90	2700	30	ք.Գյումրի Պ. Սևակի 4	Համաձայն պատվերի:	Սույն պայմանագիրն ուժի մեջ.մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգ ամՊատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում: Ապրանքների

											տեղափոխումը, իրականացնում է մատակարարը
13	30197220	Ամրակ սև	Չինաստան	Գրասենյակային ամրակներ (Սկրեպ), պլաստմասե: Տուփի՝ մեջ 100 հատ: Գույնը սև, մեծ	Տուփ	100	3000	30	ք.Գյումրի Պ. Սևակի 4	Համաձայն պատվերի:	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում: Ապրանքների տեղափոխումը, իրականացնում է մատակարարը
14	30197322	Կարիչ 20-40թերթի համար N24/6	Չինաստան	Միջին, կարիչ գրասենյակային՝ 40 էջ կարելու համար, ասեղներ No26/6 և 24/6, ծակման խորությունը 110մմ, տարբեր գույների:	Հատ	650	13000	20	ք.Գյումրի Պ. Սևակի 4	Համաձայն պատվերի:	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում: Ապրանքների տեղափոխումը, իրականացնում է

											մատակարարը
15	30193110	Թղթադարան 3	Չինաստան	Թղթադարան 3 բաժանմունք, մետաղական 4 կտորից, դարակի չափերը՝ բարձրություն- 25սմ, լայնություն- 35սմ, երկարությունը - 30սմ, սև գույնի	Հատ	2350	23500	10	ք.Գյումրի Պ. Սևակի 4	Համաձայն պատվերի:	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում: Ապրանքների տեղափոխումը, իրականացնում է մատակարարը

Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

ԳՆՈՐԴ

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ
ք. Գյումրի Պ. Սևակի 4
Ամերիա Բանկ ՓԲԸ Գյումրու մ/ճ
հ/հ 1180024816700
ՀՎՀՀ 05502348

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Մարգարիտ Արծրունյան
ք. Գյումրի Արուսյակյաի փ 93
Կոնվերս Բանկ ՓԲԸ
հ/հ 19300458422260100
ՀՎՀՀ 87321645

Հավելված N 2
«25 » ապրիլի 2019թ. կնքված
ՇՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/5-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Վճարման ժամկետը/վճարման ժամանակացույց	Վճարումներն իրականացվելու են Պայմանագրի գործողության շրջանակներում, յուրաքանչյուր ամսվա մինչև 15-րդ բանկային օրը, նախորդ ամսվա ընթացքում փաստացի մատակարարված ապրանքների 100%-ի չափով՝ Վաճառողի կողմից հաստատված և ներկայացված հաշիվ-ապրանքագրերի և հաստատված ընդունման-հանձնման արձանագրությունների հիման վրա:

ԳՆՈՐԴ

«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամ
ք.Գյումրի Պ. Սևակի 4
Անելիք Բանկ ՓԲԸ Գյումրու մ/ճ
Հ/Հ 11802024816700
ՀՎՀՀ 00502348

/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Մարգարիտ Արծրունյան
ք. Գյումրի Կրուպսկայաի փ 93
Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930045842260100
ՀՎՀՀ 87321645

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
«25 » ապրիլի 2019թ. կնքված
ՇՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/5-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«25 » ապրիլի 2019թ. կնքված
ՇՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/5-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«03» 05 2019թ. ք. Երևան

«Արաքս հրատարակչություն» ՍՊԸ-ն (հետագայում՝ Կատարող), ի դեմս տնօրեն Հովսեփ Խուրշուդյանի, որը գործում է ըստ կանոնադրության և Գեղամի Ս. Հայրապետյանի անվ. գրադարան հանրային իրավական ռեկտորի Դավիթ Երիցյանի Վերջինի, (հետագայում՝ Պատվիրատու), ի դեմս, որը գործում է ըստ կանոնադրության, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը մշակում, էջադրում և ձեւավորում է Պատվիրատուի մասին տեղեկատվությունը և նկարները (եթե դրանք առկա են)՝ հետագայում իր կողմից հրատարակվող «Հայաստանի Բուհերը. 2019-2020թթ.» տեղեկատուի (հետայսու՝ Տեղեկատու) մեջ գրադարան 1(մեկ) էջ ծավալով զետեղելու նպատակով:

1.2. Կատարողի կողմից 1.1. կետում նշված աշխատանքները կատարված են համարվում մշակված, էջադրած և ձևավորած էջը/էջերը Պատվիրատուի կողմից հաստատման օրը:

2. ԿԱՏԱՐՈՂԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կատարողը պարտավորվում է.

2.1. Մինչև Տեղեկատուի հրատարակումը Պատվիրատուի հաստատմանը ներկայացնել իրեն վերաբերող գովազդային էջի/էջերի էջադրած օրինակը/օրինակները: Այդ օրինակը/օրինակները Պատվիրատուի կողմից հաստատումից հետո հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Պատվիրատուի պահանջով ծանոթացնել նրան իրեն հատկացված էջերի նախապատրաստման, մշակման, էջադրման և ձևավորման աշխատանքների ընթացքին:

3. ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատուն պարտավորվում է.

3.1. Կատարողին տրամադրել գովազդի պատրաստման համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

3.2. Հաստատել տիրաժավորման ենթակա գովազդային արտադրանքի օրինակը:

3.3. Պատասխանատվություն կրել իր կողմից տրամադրված տեղեկատվության արժանահավատության և ճշգրտության համար:

3.4. Վճարել ըստ սահմանված կարգի Կատարողին աշխատանքների դիմաց:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ և ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի գինը կազմում է 28000 (քսանութ հազար) դրամ:

4.2. Պատվիրատուն պարտավորվում է ամբողջությամբ վճարել պայմանավորված գինը Կատարողին սույն պայմանագրի 1.1 կետում նշված աշխատանքների կատարման օրվանից և էլեկտրոնային հաշիվը դուրս գրելուց հետո 3 օրվա ընթացքում (կանխիկ կամ փոխանցումով):

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Պայմանագրի հետ կապված բոլոր վիճահարույց հարցերը լուծվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ ՀՀ գործող օրենսդրության սահմաններում:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, հրդեհը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմից:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն միևնույն հավասարազոր իրավաբանական ուժը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7.2. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման և կնքման պահից և կորցնում է իր ուժը Կողմերի կողմից փոխադարձ պարտավորությունները կատարելուց հետո:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ԱՐԱՔՍ հրատարակչություն» ՍՊԸ	[illegible]
Երևան, Կոմիտասի 5ա, բն 13	[illegible]
h/h 1570010302510100	h/h 1180202481670 0
Ամերիաբանկ ՓԲԸ	[illegible] ՍՊԸ [illegible]
ՀՎՀՀ 01239654	ՀՎՀՀ 05502348
ՏՆՕՐԵՆ	ՏՆՕՐԵՆ
Հ. Խուրշուդյան	Հ. [illegible]